պագրութեամբ հրատարակել թէ լրագրաց միջոցաւ, և թէ առանձին տետրակով, որպէս զի պատմութիւն և աշխարհագրութիւն գրել ցանկացողք՝ կարողանան ստուգութեամբ և ճշտութեամբ կազմել և պատրաստել իրենց գրելիք պատմութիւնը և աշխարհագրութիւնը։

Ես ցանկանում էի ամբողջ Շամախւոյ թեմի գիւղերը ստորագրել, բայց Սարգիս-Արք-Եպիսկոպոս Ջալալեանցի գրածից (տես Ստորագրութիւն Ջալալեանց, հատոր բ. 1858. յերես 389-ց 432.) և Շամախւոյ թեմի երբեմն առաջնորդ Դանիէլ Արք-Եպիսկոպոս Շահնազարեանցի գրածից՝ (տես Արարատ ամսագիր Ս. Էջմիածնի 1870 և 1871 յերես 257 և 318)՝ մի մեծ տարբերութիւն չ'տեսնելով, այնէ մի նորութիւն կամ առաւելութիւն, այլ միևնոյն գիւղերն և միևնոյն եկեղեցիքն ու միևնոյն բնաւորութեամբ ժողովուրդն են, որ 30—40 տարի յառաջ եղած են՝ միայն թուով տարբերուած. ուստի աւելորդ համարեցի մի առ մի նկարագրել, այլ միայն մի ցուցակի մէջ յայտնել, (յերես 229,) թէ այս ինչ գիւղը 1861 թ. այսքան բնակիչ ունէր. իսկ 1891 թուին այսքան և պարապում են այս ինչ բանով. իսկ Շամախւոյ թեմի չորս քաղաքները Բաքու, Շամախի, Ղուբա և Դարբանդ կարևոր համարեցի յատկապէս ստորագրել՝ նորա համար, որ այդ քաղաքները բաւական փոփոխութիւն են ստացել առաջուանից, մանաւանդ նաւթահանքերով հռչակաւոր Բաքուն, որ Տփխիսի հետ միացելու աստիճանին մօտեցել է ամենայն բարեկարգութեամբ և վաճառականութեամբ, և այլն, և այլն։

Յիշեալ քաղաքների տեղագրութեան մասին ես չեմ կարող պարծենալ, թէ լաւ եմ գրել, ըստ որում շատ մանրամասնութեանց մէջ չեմ մտել և չէի կարող մտնել. ուստի կը հրաւիրեմ դարձեալ այդ քաղաքներումն պաշտօնով բնակւող յարգոյ ուսուցիչներին, որք գրիչ ունին ձեռքներին, խելք գլխներին և խօսք բերաններին, որպէս զի՝ պարապ միջոցներին գրեն և ստորագրեն և ինձ նման գրողների սխալը ուղղեն, որ ինչպէս վերն ասացի, պատմութիւն և աշխարհագրութիւն գրողներն առատ նիւթ և ճիշտ տեղեկութիւն ստանան այդ քաղաքների անցեալ և ներկայ դրութեան մասին։ Տեղագրութիւնս գրելու համար առաջնս ունէի՝ 1) Վանքերի արձանագրութիւնների պատճէններն, 2) Հոգեւոյս Յովհաննէս Եպիսկոպոս